ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/212/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 07 օգոստոսի 2024թ.

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի օգոստոսի 7-ին, քննելով ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության տեղեկատվական և տեխնիկական անվտանգության ապահովման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Շահեն Արմենի Հակոբջանյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/212/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության տեղեկատվական և տեխնիկական անվտանգության ապահովման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Շահեն Արմենի Հակոբջանյանի 2021 թվականի պաշտոնեական

պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Շահեն Արմենի Հակոբջանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել Հայտարարագիրը:

1.3 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1255/263-2024 գրությամբ Շահեն Արմենի Հակոբջանյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 16:00-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված ծանուցումը Շահեն Արմենի Հակոբջանյանի կողմից ստացվել է 2024 թվականի ապրիլի 29-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.4 2024 թվականի մայիսի 30-ին պատշաճ ծանուցված Շահեն Արմենի Հակոբջանյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/210/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 25-ի թիվ 01/2270-2024 գրությամբ Շահեն Արմենի Հակոբջանյանին է ուղարկվել 2024 թվականի օգոստոսի 7-ին, ժամը՝ 12:15-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Շահեն Արմենի Հակոբջանյանի ներկայացուցիչ՝ Լիաննա Գասպարյանի ներկայությամբ 2024 թվականի օգոստոսի 7-ին, ժամը՝ 12:15-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2024 թվականի օգոստոսի 7-ին, ժամը՝ 12:15-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ Շահեն Արմենի Հակոբջանյանի ներկայացուցիչ՝ Լիաննա Գասպարյանը հայտնել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին վստահորդը չի ներկայացել, քանի որ բացակայում է Հայաստանի Հանրապետությունից: Վերջինս ներկայացրեց օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող լիազորագիր:

Լիաննա Գասպարյանը նշեց, որ իր վստահորդը ի պատասխան Հանձնաժողովի 18.04.2024թ. թիվ 01/1255/263-2024 գրության՝ 30.05.2024 թվականին Հանձնաժողով է ներկայացրել համապատասխան գրություն, որում ներկայացված են նույնաբովանդակ առարկություններ, որոնք Լիաննա Գասպարյանը ներկայացրեց Հանձնաժողովի նիստում:

Մասնավորապես, վերջինս ներկայացրեց հետևյալ առարկությունները.

«Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

Հղում կատարվեց նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասին, 37-րդ հոդվածի 7-րդ մասին, որի համաձայն՝ սույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Լիաննա Գասպարյանը նշեց, որ հիշատակված իրավակարգավորումների պարագայում անհասկանալի է Հանձնաժողովի կողմից 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելու պահանջը միայն 2024 թվականին առաջադրելը և վաղեմության ժամկետներն անցած լինելու պարագայում վարչական իրավախախտման վարույթի վերաբերյալ հիշատակումները (տվյալ դեպքում արարքը տևող իրավախախտում դիտարկելու պարագայում վարչական մարմնին առնվազն մեկ ամիս անց ակնհայտ է եղել, որ հայտարարատուն չի ներկայացրել հայտարարագիրը):

Լիաննա Գասպարյանը նշեց նաև, որ Շահեն Հակոբջանյանին մինչև 2024 թվականի ապրիլ ամիսը հայտարարագիր ներկայացնելու պահանջ չի առաջադրվել, համապատասխան մուտքանուն և գաղտնաբառ չի տրամադրվել, որպիսի պարագայում Շահեն Հակոբջանյանը օբյեկտիվորեն զրկված է եղել 2021 թվականին հայտարարագիր ներկայացնելու հնարավորությունից:

Շահեն Հակոբջանյանին 2024 թվականին հայտարարագիր ներկայացնելու պահանջ առաջադրելը, իրենց կարծիքով, չի բխում վկայակոչված օրենքների պահանջներից, քանի որ արդեն իսկ անցել են ինչպես հայտարարագիր ներկայացնելու ժամկետները, այնպես էլ դրա համար վրա հասնող պատասխանատվություն կիրառելու վաղեմության ժամկետները, ինչպես նաև փաստացի չի պահպանվել հայտարարագրում ներառվելիք տվյալների մեծ մասը:

Նշեց նաև, որ պետք է հաշվի առնել, որ օրենսդրությամբ սահմանված ժամկետներն ինքնանպատակ չեն, այլ միտված են ապահովելու պաշտոնատար անձի կողմից տվյալների ներկայացման օպերատիվությունը, որպեսզի իրավասու մարմինները այդ տվյալների

հիման վրա իրականացնեն համապատասխան աշխատանք: Տվյալ դեպքում ավելի քան երեք տարի անց երեքից չորս տարվա վաղեմության տվյալները նախկին պաշտոնատար անձից պահանջելը, իրենց կարծիքով, որևէ արդյունավետություն չի կարող ունենալ: Բացի այդ, հայտարարագրում ներկայացվող տվյալների մեծ մասը օբյեկտիվորեն չի կարող ներկայացվել՝ հաշվի առնելով, որ եռամյա ժամկետի ընթացքում տվյալների մեծ մասը մոռացվել է, քանի որ ֆիզիկական անձի համար չկա օրենսդրությամբ դրանք հաշվառելու հատուկ պահանջ (նույնիսկ պետական որոշ փաստաթղթերի պահպանման ժամկետը չի գերազանցում երեք տարին): Իսկ եթե հայտարարագրում տեղ գտնեն որոշակի անճշտություններ, ապա դրա իրավական հետևանքը կրկին ընկնելու է Շահեն Հակոբջանյանի վրա, որի համար նախատեսված է ընդհուպ քրեական պատասխանատվություն:

Միաժամանակ հայտնել է, որ Շահեն Հակոբջանյանը չի խուսափում անհրաժեշտ տվյալներ ներկայացնելուց, սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված ձևաչափով և ժամկետներում տեղեկատվություն ներկայացնելու համար խնդրել է ներկայացնել դրանց իրավական հիմքերը, քանի որ իրենց մատնանշած իրավական կարգավորումների պարագայում Շահեն Հակոբջանյանը հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չունի:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/212/2024 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության տեղեկատվական և տեխնիկական անվտանգության ապահովման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Շահեն Արմենի Հակոբջանյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության տեղեկատվական և տեխնիկական անվտանգության ապահովման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Շահեն Արմենի Հակոբջանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված ***հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը*** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Հանձնաժողովը, անդրադառնալով Շահեն Արմենի Հակոբջանյանի ներկայացուցչի դիրքորոշմանն առ այն, որ դեռևս 2024 թվականի մայիսի 30-ին թվականին իր վստահորդի կողմից Հանձնաժողով է ներկայացվել գրություն՝ համապատասխան առարկություններով, հարկ է համարում նշել, որ նշված գրությունը Հանձնաժողով է մուտքագրվել Շահեն Արմենի Հակոբջանյանի ներկայացուցիչ Լիաննա Գասպարյանի կողմից՝ առանց օրենքով սահմանված կարգով պատշաճ լիազորագրի ներկայացման, որի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից պատասխան գրությամբ հայտնվել է վերջինիս: Մասնավորապես,

Հանձնաժողովը ի պատասխան նշված գրության՝ հայտնել է, որ գրությանը կից ներկայացված լիազորագիրը (տրված՝ 2024 թվականի հունվարի 23-ին) տրված է Լիաննա Գասպարյանին «Արմ-Շին Քոնսթրաքթ» ՍՊ Ընկերության տնօրեն Շահեն Արմենի Հակոբջանյանի կողմից քրեական գործի շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեում, ՀՀ գլխավոր դատախազությունում, ՀՀ ոստիկանությունում և դատարաններում որպես Ընկերության ներկայացուցիչ հանդես գալու և լիազորագրով սահմանված գործողություններն իրականացնելու նպատակով:

Վերոնշյալից հետևում է, որ նշված լիազորագրով Լիաննա Գասպարյանին վերապահվում է իրավաբանական անձի անունից կոնկրետ քրեական գործի շրջանակներում և բացառապես թվարկված մարմիններում հանդես գալու իրավունք, որոնց ցանկում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդգրկված չէ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված գրությունը սույն վարույթի շրջանակներում չի կարող հանդիսանալ քննության առարկա:

Ինչ վերաբերում է Շահեն Արմենի Հակոբջանյանի ներկայացուցչի փաստարկին առ այն, որ իր վստահորդի նկատմամբ 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պահանջ առաջադրելը չի բխում վկայակոչված օրենքների պահանջներից, քանի որ արդեն իսկ անցել են ինչպես հայտարարագիր ներկայացնելու ժամկետները,

այնպես էլ դրա համար վրա հասնող պատասխանատվություն կիրառելու վաղեմության ժամկետները, Հանձնաժողովը հարկ է համարում նշել,որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումից բխում է, որ Օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով **վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:**

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա** չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վերոնշյալից բխում է, որ **խախտման կատարման պահը** օրենսդիրը պայմանավորել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացրած անձանց հասցեագրվող **Հանձնաժողովի գրավոր ծանուցումների ստացմամբ, ևս 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագրերը չներկայացնելու արարքի դրսևորման պահով**: Այսինքն, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետը **օրենսդիրը պայմանավորվում է ոչ թե արարքի հայտնաբերման, այլ կատարման պահով:**

Տվյալ դեպքում, Շահեն Արմենի Հակոբջանյանը Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ին ուղարկված թիվ 01/1255/263-2024 գրությունը ստացել է 2024 թվականի ապրիլի 29-ին: Մինչդեռ, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել վերջինիս կողմից, ուստի արարքի կատարման պահ է պետք է համարել 2024 թվականի մայիսի 30-ը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Հանձնաժողովը Շահեն Արմենի Հակոբջանյանի ներկայացուցչի կողմից բերված փաստարկը համարում է անհիմն:

Ինչ վերաբերում է Շահեն Արմենի Հակոբջանյանի ներկայացուցչի փաստարկին առ այն, որ Հանձնաժողովի կողմից Շահեն Հակոբջանյանին մինչև 2024 թվականի ապրիլ ամիսը

հայտարարագիր ներկայացնելու պահանջ չի առաջադրվել և համապատասխան մուտքանուն և գաղտնաբառ չի տրամադրվել, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ վերջինիս կողմից նման բովանդակությամբ հարցում Հանձնաժողով երբևէ չի իրականացվել:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Շահեն Արմենի Հակոբջանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շահեն Արմենի Հակոբջանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ